50

Հայ-Ռուսական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0051, Երևան, Հ.Էմինի 123

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ

ԺԲ.00.04– «Դատական իրավունք» (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ներպետական օրենսդրության

կատարելագործման հիմնախնդիրներին, հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցության երկու հիմնական՝ կոնվենցիոն (միջազգային բազմակողմ ունիվերսալ, տարածաշրջանային, երկկողմ, լոկալ համաձայնագրերի կնքման միջոցով) և ինստիտուցիոնալ (ինչպես համընդհանուր միջազգային կառույցների (կոմիտեներ և հանձնաժողովներ, ՄԱԿ-ի մասնագիտացած հաստատություններ), այնպես էլ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով (Եվրոպայի Խորհուրդ, ԵԱՀԿ, Ինտերպոլ և այլն) ուղղություններին: Հանցավորության դեմ պայքարի արդյունավետ իրավական միջոցների՝ հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման ինստիտուտների շնորհիվ ապահովվում է քրեական արդարադատության բնագավառի կարևորագույն այնպիսի սկզբունքների կենսագործումը, ինչպիսիք են՝ պատժի անխուսափելիությունը և հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկելը:

Հետազոտվող թեմայի արդիականությունը պայմանավորված է հանձնման գործընթացում մարդու իրավունքների ապահովման հիմնախնդրի հետ կապված գործնական և տեսական հիմնադրույթների վերլուծությամբ, այս ոլորտում նոր դոկտրինալ աղբյուրների, միջազգային դատական (քվազիդատական) մարմինների փորձի, ինչպես նաև ներպետական դատական պրակտիկայի ուսումնասիրության և ընդհանրացման անհրաժեշտությամբ: Հանցավորության դեմ պայքարի առաջնահերթությունների և հանձնման գործընթացում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության միջև լավագույն հավասարակշռության ապահովումը քրեաիրավական հարցերով պետությունների համագործակցության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ է, ինչով էլ պայմանավորված է հանձնման իրավապաշտպան գործառույթի համալիր վերլուծությունը և առկա խնդիրների վերաբերյալ նոր տեսական մոտեցումները:

Չնայած հանձնման ինստիտուտը հավասարապես հիմնվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավունքի վրա, այդուհանդերձ հանձնման իրավական

գործընթացի և մարդու իրավունքների պաշտպանության հրամայականի միջև հավասարակշռության ապահովման պատասխանատվությունն առավելապես գտնվում է յուրաքանչյուր պետության իրավազորության շրջանակում և ունի մշտական զարգացման և կատարելագործման կարիք: Ատենախոսության մեջ արվել են համագործակցության պրակտիկայում առաջացած հիմնախնդիրների լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ: Անդրադարձ է կատարվել արդեն իսկ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի վերաբերելի դրույթներին:

Ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության շրջանակներից իրավացիորեն դուրս է մնացել չճանաչված պետությունների հետ իրավական օգնության տրամադրման կամ հայցման առանձնահատկությունների հարցը՝ միաժամանակ ընդունելով, որ այն ուսումնասիրության առանձին ոլորտ է և պահանջում է մանրամասն վերլուծություն:

Հեղինակը կատարել է քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի համապարփակ, խորը և համակողմանի գիտագործնական վերլուծություն: Ըստ այդմ՝ ուսումնասիրվել է անհրաժեշտ քանակի ու վերաբերելի տեսական գրականություն, ինչպես նաև տարբեր երկրների՝ ոլորտի կարգավորմանն ուղղված բազմաթիվ օրենսդրական ակտեր: Այս համատեքստում հեղինակն անդրադարձել է իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի զարգացման պատմությանը, ուսումնասիրել է ԽՍՀՄ, ԱՊՀ մասնակից-պետությունների, ԵՄ, ԱՄՆ, ԻԻՀ, ԱՄԷ, ՉԺՀ, Թուրքիայի իրավապահ մարմինների հետ համագործակցության իրավական հիմքերն ու առանձնահատկությունները՝ վերլուծելով նաև հանձնումների բավարարման կամ մերժման հիմքերը, այդ թվում նաև՝ ոլորտը կարգավորող ՄԱԿ-ի, ԵՄ և ԱՊՀ մասնակից-պետությունների գործող միջազգային-իրավական փաստաթղթերի և քրեական գործերով իրավական

օգնության ցուցաբերման տեսանկյունից, կատարել է դրանց կիրառման պրակտիկայի ընդհանրացում և վերլուծություն:

Արդյունքում հեղինակն առաջարկել է ՀՀ օրենսդրությամբ ամրագրել կամավոր հանձնման հնարավորությունը՝ դյուրացնելով գործող ընթացակարգերը:

Հեղինակը մանրամասն քննարկման առարկա է դարձրել քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման տեսակները և իրականացման մեխանիզմները, կատարել է միջազգային դատական ատյանների (ՄԱԿ-ի միջազգային դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան և այլն), քվազիդատական մարմինների (Մարդու իրավունքների կոմիտեի, Խոշտանգումների դեմ կոմիտեի), ինչպես նաև ազգային դատական մարմինների՝ ՀՀ, ՌԴ, Բելգիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա և այլն, պրակտիկայի համալիր վերլուծություն:

Միևնույն ժամանակ հեղինակը հիմնավորել է հանցավորության դեմ պայքարում հանրային-իրավական շահերի և էքստրադիցիոն գործընթացում իրավապաշտպան գործառույթի միջև օպտիմալ հավասարակշռության ապահովման կարևորությունը:

Հատկանշական է, որ ատենախոսն իրականացրել է համագործակցության «հորիզոնական» (պետությունների միջև) և «ուղղահայաց» (պետությունների և միջազգային քրեական դատարանների միջև) տեսակների տարբերակում, էքստրադիցիայի ընթացակարգերի և միջազգային քրեական դատական ատյաններին մեղադրյալներին փոխանցելու չափանիշների մշակում, էքստրադիցիոն գործընթացում իրավապաշտպան գործոնի զարգացման ուղիների հստակեցում, տարածաշրջանային բարեփոխումների (Եվրոպական Միության շրջանակներում) էքստրադիցիայի մեխանիզմի և հայեցակարգային նոր ինստիտուտի՝ եվրոպական կալանքի թույլտվության շրջանառությամբ պայմանավորված գիտական-տեսական հիմքերի վերլուծություն:

Հեղինակը մշակել և ներկայացրել է քրեական գործերով իրավական օգնության կատարելագործմանն ուղղված պրակտիկայից բխող առաջարկություններ, որոնց մի մասն արդեն իսկ օրենքի տեսք է ստացել:

Արդյունքում՝ հեղինակն ատենախոսության մեջ ներկայացրել է հանձնման հասկացության ձևակերպումը: Այնուհետև հեղինակն անհրաժեշտաբար քննարկման առակա է դարձրել իրավական օգնության տեսակները, տրամադրման և մերժման իմպերատիվ և ֆակուլտատիվ հիմքերը: Խնդրո առարկայի կապակցությամբ հեղինակն ուսումնասիրել է տարբեր տեսաբանների կարծիքներ և տարբեր երկրներում առկա մոտեցնումներ, դրանք համադրելով հանգել հետևության, որ. ***«Հանձնումն ազգային իրավունքի պահպանմամբ և միջազգային իրավունքի համապատասխան նորմերի և սկզբունքների իրացման հիման վրա պետությունների միջև իրականացվող իրավական գործողություն է, որի արդյունքում շահագրգիռ պետությունը հայցում և ստանում է հանցագործություն կատարած անձին այն երկրից, որտեղ այդ անձը գտնվում է կամ թաքնվում է՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ վերջինիս նկատմամբ արդեն իսկ կայացված դատավճիռն ի կատար ածելու նպատակով»*** (էջ 24) :

Հեղինակն ատենախոսության հետագա շարադրանքում անդրադարձել է հանձնման իրականացման միջազգային-իրավական բազմակողմ կոնվենցիաներին, երկկողմ պայմանագրերին, ինչպես նաև բարի կամքի դրսևորմանը՝ փոխադարձության սկզբունքով: Արդյունքում հեղինակը մշակել է այդ խնդիրների լուծմանն ուղղված կարևոր օրենսդրական առաջարկներ, որոնց մի մասն արդեն իսկ ներառվել է, իսկ մյուսները կարող են կիրառվել հետագա օրենսդրական փոփոխությունների ժամանակ և ծառայել այդ խնդրի լուծմանը:

Ատենախոսության ողջ շարադրանքում հեղինակը կատարել է կարևոր գիտա-պրակտիկ նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական

հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների արժեքավոր առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, յոթ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և գիտական այլ մեթոդներ: Բացի դրանից, հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումները չափազանց արժեքավոր են, և հաստատապես կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած թվով 9 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում: Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Այդուհանդերձ, գրախոսվող ատենախոսությունը զերծ չէ վիճելի դրույթներից և որոշ թերություններից, մասնավորապես.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 3-րդ կետի ներքո արտացոլված դատողությունները, մեր կարծիքով, բավականաչափ հիմնավորված չեն: Այսպես, անդրադառնալով էքստրադիցիոն պրակտիկայում «քաղաքական հանցագործությունների» բացառման հայեցակարգային հարցերին, հեղինակը հատուկ ուսումնասիրության չի ենթարկել դրա փոխկապակցվածությունը և փոխգործակցությունը միջազգային իրավունքում ապաստանի/փախստականի կարգավիճակի հետ:

Այս առումով գտնում ենք, որ հրապարակային պաշտպանության ընթացքում ատենախոսից ակնկալվում է ներկայացնել խնդրո առարկայի վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ:

2. Ատենաախսոության 124-127 էջերում հեղինակն առաջարկել է պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի միջազգային համագործակցությանը վերաբերող գլուխները: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն իր աշխատանքում հաշվի առներ նորամուծության կարևորությունը, քննության առարկա դարձներ այդ մոտեցման հիմնավորվածությունը և ներկայացներ սեփական տեսակետը դրա վերաբերյալ: Կարծում ենք, որ նման առաջարկի իրականացումը խնդրահարույց է, քանի որ քրեական գործերով իրավական օգության, ներառյալ հանձնման ինստիտուտը մշտապես դինամիկ զարգանում է, մինչդեռ միջազգային-իրավական բազան հիմնվում է դեռևս նախորդ դարում ընդունված աղբյուրների վրա:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակն ատենախոսության տարբեր մասերում ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, մեր կարծիքով ճիշտ կլիներ աշխատանքում առանձնացնել իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումները, որից աշխատանքը միայն կշահեր:

4. Ատենախոսության նախաբանում ներկայացված ուսումնասիրության խնդիրների համատեքստում կարծում ենք ատենախոսությունն առավել կշահեր, եթե հանձման իրավական բնույթին անդրադառնալիս, հեղինակն էլ ավելի հանգամանալից անդրադառնար տարածքային, անհատական, իրավապաշտպան, համընդհանուր, ինչպես նաև միջազգային իրավազորություններին՝ դրանց մրցակցության համատեքստում:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Նելլի Հարությունյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Այսպիսով, ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.04–«Դատական իրավունք» (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը, բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
03.03.2022թ.

«Պրոֆեսոր Վ.Ենգիբարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ